



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՎԵԴՄԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎԻ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆԴԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

19 հոկտեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Ռովիաննիսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Պողոսյանի
Կ. Բալայանի

Ուսումնասիրելով քաղաքացի Մուշեղ Ղարիբյանի անհարական դիմումով
գործը քննության ընդունելու մասին հարցը,

ԴԱՐՁԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝
քաղաքացի Մուշեղ Ղարիբյանը 04.10.2010թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝
խնդրելով քննության առնել և որոշել ՀՀ քաղաքացիական դարավարության օրենսգրքի
229-րդ հոդվածի 1-ին կետի, ՀՀ վարչական դարավարության օրենսգրքի 118.4-րդ հոդվածի
1-ին մասի և ՀՀ վարչական դարավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի
դրույթների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը, մասնավորապես՝
վերջինիս 3, 14.1 հոդվածների, 18-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի 1-ին մասի
պահանջներին:

Դատական կազմը գրնում է, որ դիմողն իրավաբանորեն չի հիմնավորել վիճարկվող
դրույթների ենթադրյալ հակասահմանադրականությունը, ինչը «Սահմանադրական
դարարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի հրամայական պահանջն է, որի
բացակայությունը դիմումն ակնհայր անհիմն համարելու հիմք է:

Միաժամանակ, դադալական կազմը նշում է, որ վիճարկվող դրույթների սահմանադրականությունը չի կարող գնահարվել համապարասխան իրավական ակտի այլ դրույթներից մեկուսացված, այդ իսկ պարզաբուվ անհրաժեշտ է վիճարկվող դրույթները դիմարկել ինչպես համարել, այնպես էլ հարկապես ՀՀ քաղաքացիական դարպանականության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հետ համակարգային վերլուծության արդյունքում: Այսպես, ՀՀ վարչական դարպանականության օրենսգրքի 118.4-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քաղաքացիական դարպանականության օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դարպանական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը, բացառությամբ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով կամ նույն հոդվածի 3-րդ կետով /մասով/ նախադեսված հիմքով դարպանական ակտը բողոքարկելու դեպքերի: ՀՀ վարչական դարպանականության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դարպանականության գործն ըստ էության լուծող դարպանական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, եթե այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու այլ ժամկետ նախադեսված չէ նույն օրենսգրքով: ՀՀ քաղաքացիական դարպանականության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում է, որ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը ներկայացվել է օրենքով նախատեսված ժամկետից ուշ, և բացակայում է այն վերականգնելու մասին միջնորդությունը, կամ նման միջնորդությունը մերժվել է: Վերոնշյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունը վկայում է, որ ժամկետանց վճռաբեկ բողոքների ընդունման հնարավորությունը չի բացառվում, այսինքն՝ խնդրությունը առարկա իրավիճակների դեպքում, եթե ինչ-ինչ պարզաբներով քաղաքացին ուշ է սպանում, ենթադրենք, վարչական դարպանականության համապարասխան դարպանական ակտը, օրենսդիրը որպես երաշխիք նախադեսել է ժամկետանց վճռաբեկ բողոքների ընդունման հնարավորություն՝ ժամկետների բաց թողնելը հարգելի համարելու համապարասխան միջնորդություն ներկայացնելու միջոցով, այսինքն՝ օրենսդրությունը նախադեսում է դարպանական վերոնշյալ իրավունքի իրացումն ապահովող համապարասխան իրավական երաշխիք: Ելնելով վերոգրյալից՝ վիճարկվող դրույթներն իրենց բովանդակությամբ սահմանադրափական վեճ չեն առաջացնում:

Դիմումին կցված դարպանական ակտերի և դիմողի փաստարկների համալիր վերլուծությունը վկայում է, որ փվյալ դեպքում դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքներն ընդունենք նրա նկարմամբ կայացված համապարասխան դարպանական ակտի արդյունք են, այսինքն՝ խնդրությունը առարկա դրույթի սահմանադրականությունը

վիճարկելով՝ դիմողն ըստ էության բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել խնդրո առարկա դրույթի հակասահմանադրականության վիճարկմամբ։ Փաստորեն դիմողը ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականությունը՝ ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց։

Դեկավարվելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴՀՈ-21 որոշման մեջ արդահայփած իրավական դիրքորոշմամբ, համաձայն որի բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, Դադական կազմը գրնում է, որ այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ։

Ենելով վերոգրյալից եւ դեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 6-րդ կետով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դադական կազմը

ՈՐՈՇԵՑ.

Քաղաքացի Մուշեղ Ղարիբյանի անհապական դիմումով գործի քննությունը մերժել։

Նախագահող

Անդամներ՝



19 հոկտեմբերի 2010 թվականի
ՍԴՀՈ/1-28